ՀԱՅ ԿՆՈՋ ԵՎ ՄԱՅՐԱԿԱՆ ՍԿԶԲԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Լիանա Դալլաքյան

Մեծ է կանացի սկզբի տեղն ու դերը կրոններում, և կնոջ հիմնահարցի ուսումնասիրությունն ու արժևորումն այդ կարևոր համատեքստում ունի իր էական առանձնահատկությունները, բազմաբնույթ կողմերն ու մեկնաբանությունները:

Քրիստոնեական ուսմունքն առաջին հերթին բոցավառեց կանանց սրտերը, և քրիստոնյա քարոզիչները չէին կարող չգիտակցել, թե որքան կարևոր է նոր հավատի տարածման համար կանանց դերը, և ընդհանուր առմամբ՝ նրանց արժևորումը:

Պսակված ամուսնությունն ամենասերտ դաշն է, ամենսերտ կապն է, ամենասերտ ուխտն է, որ կարող են առհասարակ երկու մարդ ունենալ իրար հետ[1]: Ամուսնությունը ընտանիքի սրբության երաշխիքն է: Պսակի արարողությունը կնոջ և տղամարդու միմյանց նվիրվածության, սիրո, հոգատարության, հավատարմության ուխտն է Աստծո առջև: Ամուսնական սուրբ միության մեջ աննկարագրելի մեծ է կնոջ դերակատարությունը: Հենց կինն է համարվում ընտանեկան ամուր հարաբերությունների գրավականը: Հայ ընտանքիներում ծնողական կենսափորձն ու դաստիարակությունը երեխաներին են փոխանցում հիմնականում մայրերը:

Հնագույն ժամանակներից սկսած, երեխայի մասին հոգ տանելը դեռևս նախնադարյան կնոջը ստիպել է բնակվել քարայրում, որը նրան պաշտպանում էր վտանգներից: Կինն սկսում է տիրապետող դիրք գրավել իր աշխատանքով, հավաքչությամբ, պարզունակ հողագործությամբ: Քանի որ նրա աշխատանքը սնունդի ապահովման կարևոր կենսապայմաններից մեկն էր, ընտանիքում նրա դերն ու դիրքը բարձրանում էր: Կնոջ կարևոր պարտականություններից էր տան օջախն անշեջ պահելը, որն աղերսվում է նաև կրոնական հին հավատալիքների հետ: Թոնիր,

---

Հոդվածը ներկայացվել է 18.04.2019 թ., գրախոսվել է 20.05.2019 թ., ընդունվել է տպագրության 21.06.2019 է.:

[1] **Տեր-Միքելյան Ա.**, Հայաստանյաց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, Սուրբ Էջմիածին, 2007, էջ 458:

օջախը մշտապես սրբացվել է նախնիների հարստության, բարեկեցության խորհրդանիշ է համարվել, որի երաշխավորն ու պահպանողը հայ կինն է:

Վաղնջական ժամանակներում, երբ աղջիկներին ամուսնացնում էին շատ վաղ տարիքում, ամուսնական միության համար սերը գլխավոր դրդապատճառը չէր: Աղջիկները, դեռևս դուրս չեկած իրենց մանկական հասակից, տրվում էին ամուսնության: Եվ բնականաբար, կարելի է հասկանալ, որ այդ տարիքում նրանք չէին կարող սիրել իրենց ապագա ամուսնուն: Սերը դառնում էր ամուսնական միության արդյունք, այլ ոչ թե պատճառ: Նոր Կտակարանը շատ կարևոր մեկնաբանություններ և մանրամասներ է ներկայացնում ամուսնության և ընտանեկան կյանքի հիմնական սկզբունքների վերաբերյալ: Քրիստոնյաների համար ամուսնությունը հատուկ նշանակություն ունի, քանի որ այն առնչվում է Քրիստոսի և նրա եկեղեցու միջև եղած հոգևոր միության հետ: Քրիստոնեական եկեղեցին տղամարդու և կնոջ միությունը հաստատել է հատուկ արարողություններով՝ դասելով խորհուրդների կարգը, որը ողջախոհության և մաքուր կյանքի, ընտանիքի սրբության խորհուրդն է:

Պողոս առաքյալը եփեսացիներին ուղղված թղթում ասում է. «Նոյնպես պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝ իբրև զիւրեանց մարմինս, որ սիրէ զկին իւր, գանձն իւր սիրէ: Զի ոչ ոք երբեք ատեայ գանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա, որպէս Քրիստոս զեկեղեցի» (Եփես. Ե 28-30): Այս խոսքերով, Պողոս առաքյալը կնոջը համարում է գանձ՝ նրան տալով խիստ բարձր արժևորում: Կնոջը համեմատելով եկեղեցու հետ՝ նա նշում է, որ տղամարդը պետք է սիրի իր կնոջն այնպես, ինչպես Քրիստոսն է սիրում եկեղեցին: Այս հրաշալի համեմատականով մենք համոզվում ենք, որ ամուսնաընտանեկան հարաբերություններում ամենից գլխավորը տղամարդու և կնոջ սերն է: Ամուսնական հարաբերություններում ներդաշնակություն ապահովելու համար պետք է դրսևորել փոխադարձ հարգալից վերաբերմունք: Տղամարդու սիրով է պայմանավորված կնոջ հնազանդությունը: Կինը հնազանդության խոստում է տալիս ամուսնուն, բայց այն ամենևին էլ վախի արդյունք չէ: Այն պետք է լինի տղամարդու կողմից սիրված ու գնահատված լինելու արդյունք, քանզի վախի և երկյուղի վրա հիմնված հարաբերությունները չեն կարող ամուսնական կյանքի երաշխիք հանդիսանալ:

Պողոս առաքյալը նույն եփեսացիներին ուղղված թղթում ասում է ա-

մուսնական փոխհարաբերություններին վերաբերող ամենաբարոյախրատական խոսքերը. «Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրև Տեառն, զի այր է գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ և ինքն է փրկիչ մարմնոյ: Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպես և կանայք իւրեանց արանց յամենայնի: Արք, սիրեցէք զկանայս ձեր որպես և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և գանձն իւր մարմնեայ վասն նորա» (Եփես. Ե 22-25): Տղամարդը պետք իշխի իր կնոջը սիրելով: Միայն սերն է ի զորու ներդաշնակություն ապահովել կնոջ և տղամարդու ամուսնական փոխհարաբերություններում:

Կինը մշտապես եղել է հավատալիքների և հնագույն ավանդույթների, ծեսերի պահապանը: Կանայք իբրև մայրեր և նոր սերնդի դաստիարակներ, մեծագույն հարգանք են վայելել գրեթե բոլոր ժողովրդների, և մասնավորապես՝ հայերի մոտ: Հայկական իրականության մեջ երեխաների դաստիարակության կարևորագույն առաքելությունը հիմնականում դրված է կանանց ուսերին: Հայ կանայք դեռևս հնագույն ժամանակներից մեծ պատասխանատվությամբ են մոտեցել երեխայի դաստիարակության սուրբ պարտականությանը: Հովհան Ոսկեբերանն իր երեխաների դաստիարակության մասին ճառում ասում է. «Ծնողները չպետք է մտածեն այն մասին, թե ինչպես իրենց զավակներին արծաթով ու ոսկով հարստացնեն, այլ այն մասին, թե ինչպես նրանք բոլորից հարուստ դառնան բարեպաշտությամբ, իմաստությամբ և առաքինության ինչքով, որքան էլ նրանք շատ բաների պակասություն ունենան, կենսական ու պատանեկան ինչպիսի հրապուրանքներ էլ որ ունենան: Եվ ջանադրաբար հարկավոր է քննել նրանց ներս ու դուրս անելը, նրանց զրույցներն ու հավաքները, իմանալով, որ եթե դրանք մերժելի են, ապա Աստծուց ոչ մի վարձատրություն չեն ստանա»[1]: Ոսկեբերանը հայ մայրերին կոչ է անում իրենց զավակների դաստիարակությամբ զբաղվել դեռևս փոքր հասակից. «մոլախոտը այն ժամանակ պիտի հանել, երբ տարիքը դեռ փխրուն է, և հեշտ է դուրս քաշվում, ահա այդ ժամանակ անուշադրության մատնված կրքերը չէին ուժգնանա և անուղղելի չէին դառնա»[2]:

Երեխաների դաստիարակության հարցի շուրջ խոսում է նաև Վ.

---

[1] **Սուրբ Հովհան Ոսկեբերան**, Ճառերի ընտրանի, Ս. Էջմիածին, 2009, էջ 183-184:

[2] **Սուրբ Հովհան Ոսկեբերան**, նշվ.աշխ., էջ 186:

Հացունին, ում «Հայուհին՝ պատմութեան առջեւ» աշխատությունում արտացոլվում են կանացի բոլոր դրսևորումները՝ սկսած վաղ մանկությունից: Իգական սեռին հատուկ նորմերը հայկական ընտանիքներում աղջիկ երեխաների մեջ դրվում են դեռևս մանկուց: Հացունին նշում է. «Քաղաքակրթութեան առաջին պահանջն ու լաւ ապրելու արուեստն է դաստիարակութիւնը, որը պարտականութիւն ունի սերնդէ սերունդ փոխանցել ընկերային ու տոհմային գեղեցիկ աւանդութիւնները, բարոյականը, զարգացումը եւ ուսումն, որոնցով անհատները զարգացած՝ պետք է շարունակեն պահել ցեղն իր բարձրութեան վրա»[1]: Սկսած վաղ տարիքից՝ նրանց տալիս են «իսկական աղջկան» վայել դաստիարակություն: Հայ մայրերն իրենց դուստրերին սովորեցնում էին լինել քնքուշ, հեզ, հնազանդ, առաքինի և զիջող:

Քրիստոնեական կանոններով, կանայք, ըստ էության խտրականության չէին ենթարկվում: Բայց դա ամենևին չի նշանակում, թե անտեսվում էր տղամարդու և կնոջ միջև եղած տարբերությունը: Սակայն, վերջինս հիմնականում պայմանավորված էր արարչագործության ավանդույթով, և բնականաբար՝ այլ բնույթ ուներ[2]: Ըստ Աստվածաշնչի՝ կինն ստեղծված է տղամարդու կողոսկրից (Ծննդոց 2:22): Այս մասին ասվում է. *կինը երբեք չէր կարող երազել ընտանիքում և հասարակության մեջ առաջնային դերի մասին*[3]:

Ըստ ավանդության՝ Աստված Եվային Ադամի գլխից չի ստեղծել, որպեսզի նա գլուխը վեր չպահի, աչքերից չի ստեղծել, որպեսզի նա գլուխը վեր չպահի, աչքերից չի ստեղծել, որպեսզի թաքուն չնայի, ականջներից չի ստեղծել, որպեսզի թաքուն չլսի, շրթունքներից չի ստեղծել, որպեսզի չպատասխանի, սրտից չի ստեղծել, որպեսզի նախանձոտ չլինի, այլ ստեղծել է կողոսկրից, որպեսզի կինը համեստ լինի[4]:

Գրիգոր Տաթևացին կնոջ՝ տղամարդու կողոսկրից արարումը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Իսկ թե վասն է՞ր ի կողէն և ո՛չ յայլ ինչ

---

[1] **Հացունի Վ.**, Հայուհին պատմութեան առջեւ, Թեհրան, 2009, էջ 8:

[2] **Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս**, Զրույցներ Ջովաննի Գուայտայի հետ, Ս. Էջմիածին, 2001, էջ 174:

[3] **Епископ Виссарион**, Толкование на паремии из книги Библии, Санкт Петербург, 1998, с. 58-59.

[4] ***Encyclopaedia Judaica***, Jerusalem, 1971, p. 626.

մասնէ: Նախզի՝ հնազանդ լիցի Ադամայ և լուռ: Երկրորդ՝ ի կողէն էառ՝ զի մի տկար ոք իցէ, այլ զօրեղ, զի կողեղ և հաստակող կոչեմք զըմբիշս.....սուր է բերան կողին, այսպես սուր է և հատանօղ լեզու կնոջն. և պատառ է լեզվովն որպես զչար գազան»[1]: Այստեղ շեշտում է, որ խոսքը անզգամ, այլ ոչ թե համեստ կանանց մասին է: Տաթևացին նաև ասում է. «Եվ որպես մին կող էառ և շինեաց մին կին միոյ առն, նոյնպէս պարտ է լինիլ միոյ կնոջ մին այր, և մին մարդոյն մին կին»[2]: Սրանով Տաթևացին իր վճռական խոսքն է հայտնում կնոջ և տղամարդու հավատարիմ կապի վերաբերյալ: Նա կանացի բարոյականությունը վեր է համարում ամեն ինչից:

Ամուսնությունը և որդեծնությունը շատ կարևոր էր որպես քրիստոնեական-կրոնական պարտականություն: Ամուսնությունից հետո կինը պարտավոր էր ենթարկվել ինչպես ամուսնուն, այնպես էլ ընտանիքի մեծերին: Երեխաներից պահանջվում էր հարգել ինչպես հորը, այնպես էլ մորը: Սակայն երեխայի հանդեպ ամենաուժեղ սերը համարվում էր մայրականը: Չկար ավելի վատթար երևույթ, քան մայրական զայրույթը: Հայ կինը պարտավոր էր հետևել ավանդական-ընտանեկան բարոյական բոլոր նորմերին. այն է՝ տնային աշխատանքներ կատարելու պարտականություն, հնազանդություն ու հավատարմություն ամուսնուն, ընտանիքի շահերի պաշտպանության գիտակցում և այլն:

Ըստ Գարեգին Ա Հովսեփյանց կաթողիկոսի՝ «ընտանիքը նման է եկեղեցու, որի քահանան մայրն է»[3]: Այս խոսքերը վկայությունն են այն բանի, որ կանայք ևս իրենց ծառայությունն են մատուցում Աստծուն, միայն թե՝ ընտանիքի ներսում: Տղամարդիկ կարող են քահանայագործել եկեղեցում՝ Աստծո տանը, բայց կանանց է վերապահված քահանայագործելու իրենց ընտանիքներում: Տղամարդիկ իրենց եկեղեցական ծառայությամբ հավատացյալների սրտում վառ են պահում աստվածայինը: Սրան զուգահեռ, կանայք էլ անմար են պահում ընտանիքներում վառվող լույսը: Առաջին հերթին կանայք են երեխաների մեջ դնում Աստծո նկատմամբ սերն ու նվիրվածությունը: Հայ եկեղեցում կնոջը մեծ առաքելություն է վստահված, քանի որ նա մի էակ է, ով կյանքին մասնակցում է այն եզա-

---

[1] ***Գրիգոր Տաթևացի,*** Գիրք Քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 196:

[2] ***Գրիգոր Տաթևացի***, նշվ. աշխ., էջ 197*:*

[3] **Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս**, նշվ. աշխ., էջ 174:

կի հատկանիշներով, որոնք Աստված պարգևել է նրան: Այսպիսով, չկար առավել բարձրարժեք առաքելություն, որքան մայրությունն է:

Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը ևս մեծ պատկառանքով է խոսում մայրական զգացմունքների մասին: Կանայք երեխաների հանդեպ իրենց զգացմունքներն արտահայտում են բավականին մեծ գորովանքով: Կանայք են գլխավոր դեր կատարում երեխաների անհատականության ձևավորման գործում: Նրանք են եկեղեցուն տալիս այն քահանաներին, ովքեր ծառայում են Աստծոն: Առհասարակ, կանայք հոգևոր կյանքի հանդեպ առավել խոր զգացողություններ ունեն, քան տղամարդիկ: Դա, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ տղամարդիկ իրենց գրեթե ամբողջ ժամանակն անց են կացնում ապրուստ հայթայթելով:

Երեխայի ծնունդը բոլոր ժողովուրդների, և մասնավորապես հայերի մոտ համարվում է ամենացնծալի իրադարձությունը:

Մեծ տարածում էր գտել այն հավատը, որ երեխային արարում է տղամարդը, իսկ կինն ընդամենը, այսպես կոչված, «պահոց» էր, որի մեջ մեծանում և սնունդ էր ստանում երեխան[1]:

Մոր համար նշանակություն չուներ տղա թե աղջիկ երեխա է լույս աշխարհ գալիս, ամրակազմ է երեխան, թե թուլակազմ: Մայրը երեխային սնուցում է մայրական կաթով: Հին աշխարհում կարծում էին, որ մայրական կաթով երեխային փոխանցվում է ֆիզիկական և հոգեկան մայրական ուժ, որտեղից էլ գալիս էր նրանց հավատը, որ արքաներն ու հերոսները կերակրվել են երկնային կաթով: Վերջինս ապահովում էր ապագա արքայի աստվածային կյանքը, միաժամանակ նրան ուժ տալով ստանձնելու իր իշխանությունը[2]:

Երեխային անուն տալը բարդ և կարևոր հարց էր ընտանիքի համար, քանի որ անունը համարվում էր մարդու էության բաղկացուցիչ մասը, բո-

---

[1] Առհասարակ, կինն ու տղամարդը տարբեր ձևով են ընկալում երեխայի ծնունդը: Տղամարդը երեխային ընկալում է որպես իր շարունակություն: Ըստ տղամարդու՝ երեխայի շնորհիվ է, որ իր ընտանիքն ու ցեղը շարունակում է ապրել: Կնոջ ընկալումը երեխայի ծննդի հետ կապված բոլորովին այլ է: Կնոջ համար իր կրծքի տակ մեծացող էակն իրական հրաշքի է նման: Այսպիսին են նաև երեխայի ծննդի հետ կապված հայկական ընկալումները:

[2] **Вардиман Е.**, Женщина в древнем мире, Москва, 1990, с. 123.

վանդակային երևույթ, հոգևոր սուբստանցիա: Անունն ուներ իր սիմվոլիկան, ներքին էությունը, շատ դեպքերում նաև կոդավորված սյուժե:

Հին ժամանակներում հայ տիկնայք սովորություն չունեին անձամբ *դիեցնելու* (ծիծ տալ, կաթով կերակրել)[1] իրենց զավակներին, այլ նրանց հանձնում էին ստնտուներին[2]:

Ուշագրավ է, որ հին աշխարհում ընդհանրապես երեխաներին սնուցելն արդեն իսկ դարձել էր մասնագիտություն[3]:

Հայ կանայք առաջին հերթին մտածում էին երեխայի մասին: Նրանք բացի բժշկական դարմաններից կիրառում էին նաև երեխային պաշտպանող միջոցներ: Օրինակ՝ թղթի վրա գրում էին սրբերի անուններ, ինչպես նաև Ավետարանից տարբեր խոսքեր, այն դնում էին տուփի մեջ և կապում էին երեխայի բազկին կամ պարանոցին՝ իբրև պահպանիչ: Կանանց առաջին մտածմունքը երեխայի պահպանությունն էր: Այս-

---

[1] Սնուցանել կաթամբ ստեանց (տե՛ս Սեբաստացի Մ., **Նոր բառգիրք հայկազեան լեզուի**, հատոր Ա, Ա-Կ, Երևան 1979, էջ 623):
«ծիծ ուտել», «մոր կաթը ծծել», բուն արմատն է դի, որից նաև դիիլ «սնանիլ», նշանակում է նաև դայակ, մայր, սնուցիչ, ռուս. доить «կթել», дойная «կթան», доильница «կաթ կթող կին (տե՛ս Աճառեան Հ., **Հայերէն արմատական բառարան**, հատոր Ա, Երևան, 1926, էջ 668):
Ծիծ ուտել, մայրական կաթով կերակրել, մոր կամ դայակի կաթով կերակրվել, դիեցիկ՝ մոր կամ դայակի կաթով սնվող, ծծկեր (տե՛ս Աղայան Է., **Արդի հայերենի բացատրական բառարան**, Երևան, 1976 թ. հատոր Ա, էջ 298):

[2] **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 8:

[3] Օրինակ՝ Հին Բաբելոնում այս մասնագիտությունը շատ տարածված էր: Նույնիսկ ստնտուների հետ «պայմանագիր» էր կնքվում, որի դրսևորումները եղել են հատկապես Հին Հունաստանում: Այդպիսի պայմանագրերում օրինակ նշվում էր, որ կինը պետք է լինի 25-31 տարեկան, պետք է զերծ մնա սեռական կյանքից, այլ մեղքերից և այլն: Իսկ Հռոմում գերադասում էին ստնտուներ վերցնել հույն ստրկուհիներից, քանի որ կարծում էին, որ նրանք երեխաներին սնում են ոչ միայն կաթով, այլև մշակույթով:
Հայ տիկինները կաթ են տվել նաև հեթանոս Հազկերտի եղբայրներին: Սակայն միջնադարյան մեր սնապաշտ կղերը չէին ներում, որ հավատացյալ կանայք սնեին ոչ քրիստոնյա մանկիկներին:
Ստնտուները հոգեպես շատ էին կապվում այն երեխաների հետ, որոնց կերակրում էին: Եվ համարվում էր, որ արյունակցական բարեկամությունից բացի, բարեկամ էին նաև այն մանկիկները, ովքեր կերել էին նույն ստնտուի կաթը: Երեխայի և նրան կերակրող անգամ օտար կնոջ միջև ձևավորվում և ողջ կյանքի ընթացքում պահպանվում է խոր և զգացմունքային կապ՝ «կաթնային հարազատություն»:

տեղից կարելի է եզրակացնել, որ հայ կանայք դեռևս մանուկ հասակից իրենց երեխաների մեջ սերմանում են աստվածասիրական զգացումներ: Հենց կանայք են համարվում ընտանիքի համախմբման և ամրության երաշխիքը: Տաթևացին կնոջը համեմատում է ծովի հետ, որի մեջ լցվում են բազում գետեր. «և կինն որպէս ծով առ որ ժողովին գետք»[1], քանզի կինն իր բնությամբ մշտապես եղել է սնուցող, ժողովող և համախմբող:

ՀԱՅ ԿՆՈՋ ԵՎ ՄԱՅՐԱԿԱՆ ՍԿԶԲԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Լիանա Դալլաքյան

Բանալի բառեր՝ *հայ, կին, ընտանիք, ազգ, հայր, մայր, երեխա, աղջիկ, տղա, կրոն, եկեղեցի, քրիստոնեություն, որդեծնություն, ամուսնություն, պսակ*

Այս հոդվածում ներկայացվում է հայ կինն իր առանձնահատուկ ու բացառիկ դրսևորմամբ: Խոսվում է կնոջ ամենաբարձրագույն առաքինությունների ու դերի՝ ամուսնաընտանեկան հարաբերություններում նրա պարտականությունների, օջախի սրբության պահպանման, մայրության, երեխաներին քրիստոնեական ոգով դաստիարակելու մասին: Հենց մայրն է համարվում ընտանեկան ավանդույթների, երեխաների մեջ քրիստոնեական արժեքների սերմանողն ու փոխանցողը: Անգնահատելի է հայ կնոջ դերը Հայ առաքելական եկեղեցու և քրիստոնեական հավատի ամրացման գործում:

К ВОПРОСУ О ХРИСТИАНСКОМ И НАРОДНОМ ВОСПРИЯТИИ ОБРАЗА АРМЯНСКОЙ ЖЕНЩИНЫ И МАТЕРИНСКОГО НАЧАЛА

Лиана Даллакян

Ключевые слова: *армянин, женщина, семья, нация, отец, мать, ребенок, девочка, мальчик, церковь, христианство, деторождение, супружество, бракосочетание*

В статье представлено своеобразное и исключительное проявление образа армянской женщины. Затронуты вопросы о высших добродетелях и роли женщины в супружеских, семейных взаимоотношениях и обязанностях, сохранении святости очага, материнстве, христианском воспитании детей. Именно через

---

[1] **Գրիգոր Տաթևացի,** նշվ. աշխ., էջ 196:

женщину прививаются и передаются детям семейные традиции, христианские ценности. Роль женщины неоценима в упрочении армянской апостольской церкви и христианской веры.

ON THE ISSUE OF CHRISTIAN AND NATIONAL PERCEPTION OF THE IMAGE OF THE ARMENIAN WOMAN AND THE MATERNAL BEGINNING

Liana Dallaqyan

Key words: *armenian, wife, family, nation, father, mother, child, girl, boy,church, Christianity, childbirth, matrimony, wedding*

The article presents a peculiar and exceptional manifestation of the image of an Armenian woman. The questions about the highest virtues and the role of women in marital, family relationships and responsibilities, preservation of the holiness of the hearth, motherhood, and the Christian upbringing of children have been raised. It is through a woman that family traditions and Christian values imparted and transmitted to children. The role of women is invaluable in the consolidation of the Armenian Apostolic Church and the Christian faith.